

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԽԱՉԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2017-2021թթ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԽԱՉԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
19/12/2016ԹՎԱԿԱՆԻ N 64 -Ն ՈՐՈՇՄԱՄԲ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքը Հայաստանի Հանրապետության առավել կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայրերից մեկն է: Այս տարածքը, որպես բնակավայր, հայտնի է դարերի խորքից, մեզ է ժառանգվել մեր նախնիների կողմից, որոնք այն պաշտպանել և զարգացրել են մեծ մաքառումով և հաճախ նաև իրենց կյանքի գնով:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր պետություն հզորությունը կախված է հենց բնակչության բարեկեցությունից և համայնքների զարգացածության աստիճանից:

2017-2021 թթ ընթացքում համայնքի զարգացումը պետք է ապահովի կայուն տնտեսական աճ ունեցող և համաչափ զարգացող համայնք, պետական և հասարակական կյանքին ներգրավված քաղաքացիական հասարակություն:

Զարգացման հիմնական ուղղությունները կլինեն

Գյուղատնտեսության ոլորտում

1. պտղաբուծության զարգացումը - նոր տնկարքերի հիմնման և նորագույն տեխնոլոգիաներով ոռոգվող տարածքների ստեղծմամբ և հետևողական ավելացմամբ:
2. Ոռոգման համակարգերի զարգացումը - ջրամբարի կառուցում, բնակավայրի ներսում ոռոգման ցանցի կառուցումը, կաթիլային ոռոգմամբ ներդրում և կիրառում:
3. Անասնապահության զարգացումը՝ նոր ցեղատեսակների ձեռքբերմամբ, ֆերմերների ուսուցմամբ և արտավայրերի արդյունավետ կառավարմամբ

Քաղաքաշինության ոլորտում

1. Բնակարանաշինական գործընթացների իրականացմամբ - վթարային բնակարանների փոխարեն նոր բնակարանների կառուցման ուղղված ծրագրերի իրականացմամբ;
2. Փողոցների բարեկարգմամբ և լուսավորվածության ապահովմամբ;

Բնապահպանության ոլորտում

Համայնքի սեփականություն հաղիսացող հողերի վրա բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման ծրագրի իրականացմամբ, որի բաղադրիչներից է համայնքի զարգացման ուղղված միջոցառումների իրականացումը:

Արդյունաբերության ոլորտում

1. Խաղողի մթերման և վերամշակման գործարանի՝ «Շամպայնի» գործարանի ստեղծում համայնքի տարածքում որով կխթանվի խաղողագործությունը, կստեղծվեն նոր աշխատատեղեր

տուրիզմի համար կստեղծվեն նոր հնարավորություններ և հեռանկարներ

Մշակույթի ոլորտում

1. Արդեն ավանդույթ դարձած և լայն ճանաչում ստացած «Գաթայի փառատոնի» ամենամյա կազմակերպում և անցկացում, որի շրջանակներում կազմակերպվում են տոնավաճառներ, և ապահովվում է տուրիստների մեծ հոսք համայնքի տարածք:

Համայնքի հիմնական պրոբլեմներից կուզեի առանձնացնել

1. Ոռոգման ջրի հիմնախնդիրը: Ջուրը մատակարարվում է Արենի-Խաչիկ երկաստիճան պոմպակայանով և կախման մեջ է գտնվում <<Խանջյանի առու>> հիմնական ջրատարից: Մատակարարվում է ոչ բավարար քանակի ջուր, լինում են ըդհափումներ, ուշացումներ, որի հետևանքով ցանքատարածու-թյունները ոռոգվում են ոչ լիարժեք և ստացվում է ցածր բերք: Ջրամբար չունենալու պատճառով Գարնանային ձնհալի և անձրևների շրջանում վարարած ջրերը չեն կուտակվում՝ հետագա ամիսներին օգտագործելու նպատակով և իզուր կորչում են:

Ոռոգման ջրի սակավության պատճառով հնարավոր չէ հիմնել Տնկարքեր և զբաղվել բարձրարժեք գյուղատնտեսական կուլտուրաների մշակմամբ: Տնկարքեր հիմնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ բավարար քանակի երաշխավորված ոռոգման ջրի քանակություն:

Գյուղատնտեսական արտադրանքի մթերման հիմնախնդիրը - մթերող կազմակերպությունները դժվարանում կամ հրաժարվում են մթերել աճեցված խաղողի բերքը:

Հացահատիկի բերքատվությունը ցածր է, 1հա-200-250g որը նույնպես հետևանք է ոռոգման ջրի սակավության:

2. Երիտասարդ ընտանիքներ քիչ են ձևավորվում, իսկ ձևավորված ընտանիքները գերադասում են բնակվել քաղաքատիպ բնակավայրերում, քանի որ բնակարանային և կենցաղային պայմանները հեռու են բավարար լինելուց, ինչպես նաև դժվարանում են գյուղացիական տնտեսությամբ պահել իրենց ընտանիքը:

Համայնքի բնակչության հետ միասին Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է միասնական ուժերով հաղթահարել համայնքի զարգացման նշված խոչընդոտները և համայնքը դնել կայուն զարգացման ուղու վրա: Համայնքի զարգացման պլանում ներառված դրույթները և միջոցառումները ձևավորվել են համայնքի բնակչության և ավագանու հետ ունեցած լայն քննարկումների արդյունքում:

Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու նիստում:

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքը ընդգրկում է մեկ բնակավայր, Խաչիկ բնակավայրը:

Տարածքը՝ 7303 հա. գտնվում է Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, Եղեգնաձոր քաղաքից 37կմ հեռավորությամբ դեպի հարավ: Մայրուղուց և մոտակա բնակավայրից՝ Արենիից հեռու է 21 կմ: Երևան քաղաքից հեռավորությունը կազմում է 120 կմ: Խաչիկ գյուղը գտնվում է շրջապատող լեռների դեպի արևմուտք նայող լանջի վրա:


Գյուղից դեպի Շարուրի դաշտը և Արարատ լեռը բացվում է հազվագյուտ գեղեցկությամբ՝ լայնատարած և չքնաղ տեսարան: Բնակավայրի կենտրոնը գտնվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա: Սահմանակից է՝ հարավից Նախիջևանին՝ 27կմ ընդհանուր պետական սահմանով հյուսիսից՝ Արենի համամնքին 5.94կմ . արևելքից՝ Գնիշիկ համայնքին 8.61կմ;

Վարչական տարածքի ամենաբարձր լեռնագագաթը՝ 2773.4 մ Ծ.Մ. /Հարսնասար/ ամենացածր կետը՝ 1600 մ Ծ.Մ. /Զրաղացներ/

Կլիման չոր, կիսանապատային է: Ձմեռը ձյունառատ և մեղմ է, ամառը՝ զով: Տարվա միջին տեղումները՝ 300-400մմ: Քամին՝ հարավային և հարավ-արևմտյան: Բավական մեծ կշիռ է կազմում պարզ և արևոտ օրերի քանակը: Հազվադեպ են մառախլապատ օրերը:


Խաչիկ գյուղը բնակատեղի է անհիշելի ժամանակներից: Գյուղի շրջակայքում հայտնի են բազմաթիվ բնակավայրերի հետքեր, բնակավայրերի անուններ և գերեզմանոցներ: Առաջին մարդահամարը անցկացվել է 1832 թվականին, որի արդյունքներով հաշվվել է 22 ընտանիք 101 բնակիչով, որից 18 ընտանիքներ եղել են բնիկներ, 4 ընտանիքներ եկել են Պարսկաստանից: Խաչիկ գյուղից 4կմ դեպի հյուսիս գտնվում է նշանավոր <Քարկոփ> կամ <Խոտակերաց> վանական համալիրը: Խաչիկ գյուղի կենտրոնում գտնվում է Ս.Աստվածածին Եկեղեղին, որ կառուցվել է 1681 թվականին: Նույն տեղում, 1888 թվականին կառուցվել է Եղեղեցու նոր շենքը, որը կանգուն է մինչ այժմ: Խաչիկ գյուղում դպրոց հիմնադրվել է 1870 թվականին, Երևանի բնակիչ և Խաչիկում մեծ հողատեր Ստեփաննոս Եղիազարյանի հորդորով և օգնությամբ:

Բնակչությունը 997 մարդ՝ որից 512 տղամարդ, 485 կին




Առկա բնակչությունը՝ 765 մարդ

- 0-4 տարեկան երեխաների քանակ 43 որից 19 տղա, 24 աղջիկ
- 0-15 տարեկան երեխաների քանակ 137, որից 70 տղա, 67 աղջիկ
- 16-62 տարեկան տղամարդկանց քանակը 270
- 63 և բարձր տարիքի տղամարդկանց քանակը 37
- 16-62 տարեկան կանանց քանակը 261
- 63 և բարձր տարիքի կանանց քանակը 60
- 15-49 տարեկան կանայք 249




Տնային տնտեսությունների քանակն ըստ շնչերի թվի

Մտացվել է 16/12/2016



Խաչիկ համայնքի բնակչությունը 1831-2016թթ





Համայնքի հողատարածքները

		Ընդամենը	Համայնքում առկա	պետական	իրավաբանական
1.	Համայնքի վարչական տարածքը,	7303,57	6337,61	199,47	766,49
2.	գյուղատնտեսական նշանակության հողեր	6999,39	6299,25	-	700,14
3.	պահուստային հողեր	-			
4.	բնակելի շինությունների տակ հողեր	91,85	23,08	2,42	66,35
5.	արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր				
6.	ընդերքօգտագործման հողեր	10	10		
7.	ճանապարհների տակ հողեր	7,04	0,04		7
8.	առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր	34,52	2,62		31,90
9.	անտառային հողեր	156,90		156,90	
10.	ջրային ֆոնդի հողեր	1,03	1,03		
11.	հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ				
12.	Այլ _____ (նշել) հատուկ նշան. հողեր	2,09		2,09	



2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Սոցիալ-տնտեսական իրավիճակ		2016թ.	2017թ.
Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն,	հազար դրամ	23988,4	26994,6
Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը (%),	(%),	10%	




Խաչիկ համայնքի 2016թ. եկամուտների պլանի (Ճշտված) տեսակարար կշիռը

Բյուջե	Գումարը (դրամ)	Տոկոսային հարաբերությունը
Վարչական	22988400	95.83%
Ֆունդային	1000000	4.17%
Ընդամենը	23988400	




Խաչիկ համայնքի 2016 թ. վարչական բյուջեի համամասնությունը ըստ եկամտաուեսակների
(պլանային ցուցանիշներ)



- ☐ ԳՈՒԹՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒԹՔԻՑ
- ☐ ԳՈՒԹՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒԹՔԻՑ
- ☐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՅՔՆԵՐԻ ԵՎ /ԿԱՄ ԾՈՒԱՅՈՒՄԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՆ. ՀԱՄԱՐ
- ☐ 25 ԸԹԱՅԻ ԼԵՐՔ. ՊԱՇՏ. ԴՐԱՄԱՇՆ-ՆԵՐ՝ ՍՏԹՎ. ԿԱՌԱՎԱՐՄ. ԱՅԼ ՄԱԿԱՐԴԻՑ
- ☐ ԳՈՒԹՔԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ
- ☐ 37 ԸԹԱՅԻ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐ
- ☐ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Խաչիկ համայնքի 2016 թ. վարչական բյուջեի հավաքագրվող եկամուտների համամասնությունը



- ԳՈՒԹՔԱՅԻՆ ԶԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒԹՔԻԹ
- ԳՈՒԹՔԱՅԻՆ ԶԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒԹՔԻԹ
- Ս) ՀՏԱՐ-ՈՒՄ ՆՈՐ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆ. (+ՈՉ ՀԻՄՆ.) ՇԻՆԱՐ-ԹՅՈՒՆ (ՏԴԴՄ.) ԹԼՏՎ. ՀԱՄԱՐ
- ՍՅՅՎ. ԿԱՌԱՎԱՐՄ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԻԹ
- ՍՅՅՎ. ԿԱՌԱՎԱՐՄ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԻԹ
- ՍՅՅՎ. ԿԱՌԱՎԱՐՄ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԻԹ
- ՍՅՅՎ. ԿԱՌԱՎԱՐՄ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԻԹ
- ՍՅՅՎ. ԿԱՌԱՎԱՐՄ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒ

հազ դրամ

ՀՀ	Եկամուտների տեսակը	2016 փաստ:	2017 փաստ:	2018 Նախատ	2019 կանխատ	2020 կանխատ	2021 կանխատ
1	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ	24122,3	23409,8	24199,9	24452,2	246682,3	24797,4
Ա.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	5770,6	4034,6	4034,6	4176,6	4246,6	4281,6
Ա 1	ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2540,6	2804,6	2804,6	2916,6	2956,6	2991,6
1	ՀԱՐԿԱՑԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2516,1	2780,6	2780,6	2880,6	2920,6	2955,6
1.1	Հողի հարկ	1205,6	1205,6	1205,6	1205,6	1205,6	1205,6
1.2	Գույքահարկ	1311,0	1575,0	1575,0	1675,0	1715,0	1750,0
1.3	Եկամտահարկ						
1.4	Այլ հարկային եկամուտներ						
2	ՏՈՒՐՔԵՐ	24,0	24,0	24,0	36,0	36,0	36,0
2.1	Պետական տուրքեր						
2.2	Տեղական տուրքեր	24,0	24,0	24,0	36,0	36,0	36,0
3	ՈՉ ՀԱՐԿԱՑԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	3230,0	1230,0	1230,0	1260,0	1290,0	1290,0
3.1	Համայնքի վարչական տարածքում Գտնվող հողերի վարձակալությ. և օգտագործման դիմաց գանձվող վճարներ	490,0	490,0	490,0	490,0	490,0	490,0
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ						
3.3	Վարչական կիրառված արտադրանքներ, շահարկ ՏԻՄ կողմից վարչական Պատասխանատվ. Միջոցների կիրառումից եկամուտներ						
3.4	Տեղական վճարներ						
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	2740,0	740,0	740,0	770,0	800,0	800,0
Ա 2	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ	18351,7	19375,2	20165,3	20275,6	20435,7	20515,8
Բ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ	18351,7	19375,2	20165,3	20275,6	20435,7	20515,8
Բ1	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ	18351,7	19375,2	20165,3	20275,6	20435,7	20515,8
Բ2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ						

Ծառայությունների ոլորտի համայնքի հիմնական հազար դրամ	2016	2017
Ծեռնարկությունները և հիմնական ծառայությունները, 1. Բնական կենցաղային գազի լիցքավորման կետ 1		50,0
2. Առևտրի կետեր 2	24,0	24,0

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ, Դաշտավարական

	սպառման շուկա	2016թ.			2017թ.			
		տ.	միավ գինը՝ հազ. դրամ	գումարը՝ հազ. դրամ	տ.	միավ գինը՝ հազ. դրամ	գումարը՝ հազ. դրամ	
1	ընկույզ	ներքին շուկա	50	1 000	50 000	50	1 000	50 000
2	խաղող	մթերող կազմակ.	20	180	3600	25	180	4500
3	ցորեն	ներքին սպառում	300	100	30 000	250	100	25 000
4	գարի	ներքին սպառում	450	100	45 000	450	100	45 000
5	խնձոր	ներքին շուկա	20	400	8 000	100	200	20 000
6	ծիրան	ներքին շուկա	15	400	6 000	20	400	8 000
7	այլ միրգ	ներքին շուկա	20	200	4 000	20	200	4 000
8	խոտ	ներքին սպառում	1000	40	40 000	1000	40	40 000

անասնապահական

	սպառման շուկա	2016թ.			2017թ.			
		տ.	միավ գինը՝ հազ. դրամ	գումարը՝ հազ. դրամ	տ.	միավ գինը՝ հազ. դրամ	գումարը՝ հազ. դրամ	
1	միս տավ	ներքին շուկա	25	2 000	50 000	25	2 000	50 000
2	միս խոզի	ներքին շուկա	5	2 000	10 000	5	2 000	10 000
3	միս մանր	ներքին շուկա	2	3 000	6 000	2	3 000	6 000
4	ծուր /հազ. հատ/	ներքին սպառում	250	50	12 500	250	50	12 500
5	բուրդ	ներքին սպառում	1					
6								

Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ.

1. «Քարկույի» վանական համալիր	9-րդ դար	
2. Ս/Ա Եկեղեցի	17-19-րդ դ.	
3. «Ննգարատ» մատուռ	18-19-րդ դ.	
4. Խաչքար երկաստիճան պատվանդանի վրա	1271թ.	
5. Հին գյուղատեղի և գերեզմանոց, Խաչքարեր	10-15-րդ դ.	
6. Գյուղատեղի «Առնետ» կամ «Առաստամուխ»	10-13-րդ դ.	
7. Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1970թ.	
8. Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1957թ.	
9. Խաչքար «Թուրխնաչ»	2016թ.	

10. Ջրվեժ ժայռապատ վայրում			
11. Դեպի Արարատ լեռը նմյո՞ղ, բաց հորիզոնով լայնատարած և հիասքանչ տեսարան			
12. Էկոտուրիզմի զարգացման համար հրաշալի լեռներ, որտեղ կան էնդեմիկ բուսատեսակներ, վայրի կենդանիներ, տեսադաշտում՝ բաց հորիզոններ:			

Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ, ԲՈՒՀ-եր,		2016	2017
1. Միջնակարգ- հանրակրթական դպրոց՝ նախատեսված 200 աշ.			
2. Նախակրթարան՝ նախատեսված 20 երեխայի համար		1	1

		2016	2017
Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ			
1. Ընտանեկան նպաստներ ստացող ընտանիքներ		30	30
2. Սոցիալական նպաստ ստացող ընտանիքներ		10	10

Առողջապահական հաստատություններ		2016	2017
1. Բնօժկետ			1

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրեր

1. <<Անասնապահության զարգացում Հայաստանի Հարավում>> (SDA Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ)

Ծրագրի նպատակն է- խրախուսել անասնապահության ոլորտում նոր փորձի և մեթոդների ներդրումն ու տարածումը:

Ծրագրին որպես շահառուներ մասնակցել են շուրջ 30 հոգի, որոնք ցանկություն են հայտնել բարելավել իրենց փորձը և գիտելիքները, պատրաստակամություն՝ նորարարական մոտեցումների կիրառելու իրենց փորձը տարածելու գործում:

Ծրագիրը շրջանակվում է մինչև 35 տ ևս 12 երիտասարդների նոր խմբի և մինև 60 տարեկան ևս 20 կանանց նոր խմբի հետ:

Անց են կացվում դասընթացներ, սեմինար պարապմունքներ, պրակտիկ այցելություններ առաջավոր փորձ կիրառող ֆերմերներին Սյունիքի մարզում:

Իրականացվել է անասնազխաքանակի փոխարինման, բարձր մթերատու ցեղատեսակի կովերի տրամադրման, անասնակեր ածեցնելու համար սերմերի տրամադրման գործընթացներ:

1. WWF Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից իրականացվում է <Գնիշիկ բնապահպանական Լանդշաֆտ> բնապահպանական ծրագիրը:

Ծրագիրը նախատեսում է շուրջ 3500հա տարածքի վրա ստեղծել բնապահպանական տարածք՝ <Պահպանվող Լանդշաֆտ>:

Ծրագիրն ունի պահպանման գոտու բնակավայրերի զարգացման բաղադրիչ, որի նպատակը շրջակա բնակավայրի, տվյալ դեպում Խաչիկ համայնքի, բնակիչների կենսամակարդակի բարձրացումն է:

Իրականացվող միջոցառումների շնորհիվ նախատեսվում է ջրաբքիացնել գյուղի մոտակա արոտները, ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա, տրամադրել սերմացու և վառելիք մշակովի կերաբույսերի նոր տարածքներ ցանելու համար, ձեռք բերել չրագործության հարմարություններ և բնակիչներին ապահովել չրագործությամբ զբաղվելու աշխատանքով:

Բաղադրիչն իր մեջ ընդգրկում է տուրիզմի զարգացման ուղղությունը:

Իրականացնել է խմելու ջրի ցանցի նորոգման ենթածրագիրը 9 130 000դրամ արժողությամբ - 2016թ:

Բնակիչներին տրամադրվել է 3700 տնկանյութ, շուրջ 2,5 մլն դրամ արժողությամբ,;

Մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող ծրագրեր

1. Շամպայն գինիների գործարանի կառուցում << SEMINA CONSULTING >> ընկերության կողմից

Գործարանը կառուցվելու է տեղում արտադրվող խաղողի հումքի վրա, որով լավագույնս կլուծվի արտադրվող խաղողի բերքի իրացման խնդիրը:

Ծրագրի նպատակն է խթանել գյուղում խաղողագործությունը և հողագործությունը:

Ծարագրի շահառուներն են համայնքի բնակիչները:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել առաջիկա տարիների ընթացքում:


2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեն կազմված է վարչական մասից շուրջ 95% ֆոնդային մասից շուրջ 5%։ Համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների շուրջ 80%-ը կազմում են պետական բյուջեից հատկացվող ընթացիկ ներդրին պաշտոնական դրամաշնորհները։ Սեփական եկամուտները կազմում են գույքային հարկեր անշարժ գույքից 5,31%, գույքային հարկեր այլ գույքից 5,69%, գույքի վարձակալություններից եկամուտները 2,13%, ՈԾԽՀ թույլտվություններ- 0,05%, Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ 4,35%, այլ եկամուտներ 3,23% :

Բյուջեի վարչական մասի ծախսերի հիմնական ուղղությունները կազմում են աշխատողների աշխատավարձեր 58,76%, եներգետիկ ծառայություններ 4,16 %, Կոմունալ ծառայություններ 0,20%, կապի ծառայություններ 1,24%, ապահովագրական ծախսեր 0,16%, համակարգչային ծառայություններ 0,32%, տեղեկատվական ծառայություններ 0,15%, Ընդհանուր բնույթի այժառայություններ 2,59%, մասնագիտական ծառայություններ 4,36%, շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում 7,39%, տրանսպորտային նյութեր 7,04%, հատուկ նպատակային այլ նյութեր 2,90%, այլ նպաստներ բյուջեից 9,16%:

Խաչիկ համայնքի 2016 թ. վարչական բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը

(ըստ տնտեսագիտական



դասակարգման)

2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՈՉՆԵՂՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

1	գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը	Ծայրամասային բնակավայր, մայրուղուց և շուկաներից կտրվածություն, սահմանամերձ համայնք: Ֆինանսական ներդրումների պակաս
2	համայնքի գույքի կառավարումը	Արոտները և վարելահողերի նոր տարածքներ վարձակալությամբ տրամադրելու դժվարություններ - Գյուղին մոտակա Արոտները գտնվում են սահմանամերձ գոտում, իսկ հեռու արոտները օգտագործելը արդյունավետ չէ, - համայնքապատկան վարելահողերը հիմնականում անջրդի են, և բերրի չեն, մշակության ծախսերը մեծ են և օգտագործելն արդյունավետ չէ, /մասնավոր անձանց նույնատիպ վարելահողերը նույնպես չեն մշակվում/ Կան հողերի վարձակալությամբ տալու հետ կապված նախագծային, աշխատանքային և պետական գրանցման դժվարություններ հանդամիջյան ճանապարհները դժվարանցանելի են Ընդերքօգտագործման հողամասերի մասով կան հողերի պետական գրանցման հաշվառման հետ կապված չլուծված պահեր - դրանք արտացոլված չեն համայնքի հողի հաշվեկշի մեջ:
3	նախադարոցական կրթության և արտադարոցական դաստիարակության կազմակերպումը	Համայնքը չունի մանկապարտեզ, հիմնականում ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով: Մանկապարտեզի տարիքի երեխաների դաստիարակությունը իրականացվում է ծնողների ուժերով կազմակերպված այդ տարիքի երեխաների խմբում, ստեղծված են սենյակային բոլոր բավարար պայմանները, դժվարությամբ է լուծվում ֆինանսավորման հարցը՝ 2016թ.-ի ֆինանսավորումը կատարվել է Կրթության նախարարության աջակցությամբ:
4	ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը երիտասարդության ներգրավվածությամբ	Մշակույթի տան շենքը ունի վերանորոգման կարիք: Ձմռան ամիսներին դահլիճը տաքացնելը պրակտիկապես անհնար է: Կազմակերպվում են միայն տոների և հիշատակի օրերի միջոցառումները: Սպորտի մասսայական ձևերի մրցաշարեր կազմակերպելու համար զգացվում է սպորտային միջոցառումների կազմակերպիչների և ֆինանսավորման պակաս: Մշակութային ընդգրկուն միջոցառումների առանցք կարող է հանդիսանալ արդեն ավանդաբար կազմակերպվող <<Գաթայի փառատոնը>>
5	համայնքի բնակչության սոցիալական պաշտպանվածությունը	
6	ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը	Մասնագետների պակաս, ֆինանսների սղություն
7	համայնքում բնակարանային շինության խթանումը	Նախկին ծրագրերը թերի են մնացել Պետական ծրագրեր չկան, Բարեգործական ծրագրերի պակաս

		Բնակիչների սեփական եկամուտների պակաս Բնակավայրի հեռանկարայնության խնդիրներ
8	համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը,	փողոցները ասֆալտապատ չեն, և սելավներից քանդվում են փողոցների մեծ մասը լուսավորված չէ Շատ անբարեկարգ է կենտրոնական փողոցի Գյուղամիջյան հրապարակին հարող հատվածը Ջրամատակարարումը իրականացվում է համայնքի աշխատակազմի կողմից Բնակավայրը չունի կոյուղու ցանց, Աղբահանումը և սանմաքրումը կատարվում է համայնքի բյուջեի միջոցներով, Թափվող աղբի ծավալները գնալով աճում են, ինչը անհանգստացնող է Գերեզմանատունը գործում է
9	համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը	Համայնքում հասարակական տրանսպորտ չի գործում: Լուրջ խոչընդոտ է մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ հասարակական տրանսպորտային կապի բացակայությունը:
10	պետության պաշտպանության իրականացման աջակցումը	
11	աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը	անանցանելի է Խաչիկ -Գնիշիկ ճանապարհը, գոծնականում հնարավոր չէ ապավինել այդ ճանապարհին Պարզագույն թաքստոցներ,/ թեև համանքում առկա են նկուղային հարկեր, սակայն դրանց անխոցելիությունը մասնագետների կողմից ուսումնասիրված չէ/ հարմարեցված միջանկյալ կայանատեղի անասնունների պահելու համար էվակուացիայի դեպքում:
12	գյուղատնտեսության զարգացման խթանումը	Ոռոգման ջրի չլուծված խնդիր Ոռոգման ջրի ջրամբարի բացակայություն – որի մեջ հնարավոր կլինե՞ր կուտակել գարնան ամիսների ձնհալի և անձրևների ջրերը շուրջ՝ 400 000 Խմ ծավալով: Բարձրարժեք մշակաբույսեր աճեցնելը , նոր տնկարքներ հիմնելը հնարավոր չէ առանց լիարժեք ոռոգման հնարավորության: Հացահատիկային Ցանքատարածությունները ոռոգվում են ոչ լիարժեք, ստացվում է ցածր բերք, գյուղացու եկամուտները չեն ավելանում: Բաժանվել է շուրջ 3700տնկանյութ: Գարնանը ոռոգման ջրով ապահովելու դեպքում կառաջանան շուրջ 10 հա նոր այգիներ, նոր հիմնվող այգիները ցանկալի է հիմնել կաթիլային ոռոգման համակարգով Ոռոգման ջրի ոչ արդյունավետ կառավարում -
13	համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը	Աղբավայրի ծավալի արագ մեծացում
14	զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝	Հյուրատնային բիզնեսին հարմարեցված տների պակաս, Հյուրատնային բիզնեսի վերաբերյալ

	գբոսաշրջության զարգացման խթանումը,	բնակիչների գիտելիքների և հմտությունների պակաս Մշակութային միջոցառումների պակաս / երիտասարդների ակտիվ մասնակցությամբ, սպորտային միջոցառումներ, որոնց կարող են մասնակցել գբոսաշրջիկները ամենօրյա ֆիլմերի դիտում./
15	համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպման անհնարավորությունը ձմռան ամիսներին / դահլիճի տաքացում/
16	համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում	Ցածր և ոչ Կայուն եկամուտներ, ապագայի հեռանկար, սոցիալ- հոգեբանական խնդիրներ,
17	համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը	ատամնաբուժական ծառայության բացակայություն բժշկական հետազոտությունների հնարավորության բացակայություն
18	համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը	
19	համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը	Գրադարանի պահպանում
20	բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով	վստահության մթնոլորտի բացակայություն բնակչության ցածր եկամուտներ

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՈՒԹՀՎ)

	ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<p>ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ</p>	<p>1. ՀՀ պետական մարմինների կողմից սահմանամերձ գյուղերի նկատմամբ վարած նպաստավոր քաղաքականություն 2. Խաղաղության հաստատում 3. Ներդրումներ, շուկայի աշխուժացում 4. Բարեգործական ծրագրեր</p>	<p>1. Համայնքների խոշորացում 2. Պատերազմական իրավիճակ 3. Բնական աղետներ 4. Երիտասարդ ընտանիքների արտագաղթ 5. Վարկային խնդիրներ</p>
<p>1. Բարենպաստ կլիմայական պայմաններ 2. Հողային լավ ռեսուրսներ 3. Գյուղատնտեսական հմտություններ և տրադիցիաներ 4. Ոռոգման ցանցի առկայություն, գարնանը ջրի մեծ քանակություններ 5. Խմելու ջրի ցանցի առկայություն 6. Կազմակերպված աղքատիություն 7. կվարցիտի հանքավայր 8. բնական աղբյուրներ 9. Վերանորոգված դպրոց, նախակրթարան, մանկահասակ երեխաների խումբ 10 պատմամշակութային հուշարձաններ 11. ԱՌՆ զնահատում 12 <Գաթայի փառատուն></p>	<p>Ոռոգման ջրի ջամբարի կառուցում Ոգոգման նոր տեխնոլոգիաների ներդրում Տնկարքերի հիմնում, Վերամշակող արտադրամասերի ստեղծում Սառնարանային տնտեսությունների ստեղծում Ջերմոցային և սառնարանային տնտեսությունների խրախուսում Տուրիզմի զարգացում, Գույքազրկ հնարավորությունների օգտագործում Հյուրատնային բիզնեսի խրախուսում Սպորտային և մշակութային միջոցառումների կազմակերպում</p>	<p>Բնակչություն իրազեկում և ուսուցում, սեմինարների կազմակերպում Ճանապարհների անցանելիության ապահովում Համագործակցություն զինմասի հրամանատարության հետ Կարկուտ կայանքների ձեռքբերում Ցանցապատ այգիների հիմնում Սելավապարների նորոգում և նորերի կառուցում Երիտասարդ ընտանիքների ծնելիության խրախուսում Բնակարանաշինություն երիտ. ընտանիքների համար</p>
<p>ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ</p> <p>1. Ծայրամասային և սահմանամերձ լինելը 2. Հեռավորությունը և բարձրլեռնային լինելը 3. Ոռոգման ջրամբարի բացակայություն, ոռոգման ցանցի մաշվածություն, ամուս և աշնան ամիսներին ջուրը մատակարարվում է պոմպերով 4. Բյուջեի սղություն 5. Կոյուղու բացակայություն 6. Գյուղամիջյան փողոցները գրունտային են 7. Կարկտահարությունից պաշտպանված չէ 8. Մշակույթի շենքի վթարային վիճակ 9. Բնակելի վթարային տներ 10 Հանդամիջյան ճանապարհների վատ վիճակ 11 Համայնք Գազաֆիկացված չէ</p>	<p>Ոռոգման ցանցի վերանորոգում Արտադրված ապրանքի գովազդ Արտադրված գյուղմթերքների որակի բարձրացում Օրագանիկ գյուղմթերքների արտադրություն Մեղվաբուծության զարգացում Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում Գյուղամիջյան փողոցների բարեկարգում և լուսավորություն Բնակավայրի ոռոգման ներքին ցանցի ստեղծում Բնակարանաշինության ծրագրերի ներդրում և իրականացում Ոռոգման ջրատարների ավելացում և նորոգում, գարնան ամիսներին ջրի կուտակում Մշակույթի շենքի վերանորոգում</p>	<p>Հրշեջ կեղծ գործունակության ապահովումը: Ավտոմատ իրազեկման համակարգի գործունեության ապահովում Մշակութային և սպորտային միջոցառումներումների ակտիվացում, Հանրապետական կոլեկտիվների ներգրավումով: Մշակութային փառատունների կազմակերպում, ցուցահանդեսների կազմակերպում Բարձրարժեք կուլտուրաների մշակության խրախուսում Տոնավաճառների կազմակերպում <<Գաթային փառատունի>> շրջանակներում</p>

2.7 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի արդյունքում ակնկալվում է հասնել համայնքի կայուն զարգացման վիճակի

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են լինելու

1. Պտղատու նոր այգիների հիմնումը և պտղաբուծության զարգացումը, - որը գալու է փոխարինելու ոչ բարձրարժեք կուլտուրաների մշակությանը, ինչի արդյունքում զգալի ավելանալու են համայնքի բնակիչների եկամուտները
2. Գյուղատնտեսական մթերքների իրացում - Մթերող և վերամշակող արտադրամասի՝ <<Շամպայնի գործարանի>> ստեղծմամբ ապահովվելու է արտադրված խաղողի բերքի մթերումը, ինչը իր հերթին նպաստելու է խաղողագործության խթանմանը, ստեղծվելու են նոր աշխատատեղեր, ստեղծվելու են տուրիզմի զարգացման համար նպաստավոր պայմաններ
3. Բնակարանաշինությունը – համայնքում իրականացվելու են երիտասարդ ընտանիքների համար նոր բնակելի տների կառուցման ծրագրեր, որի արդյունքում երիտասարդ ընտանիքները իրենց ապագան կապելու են գյուղի հետ և չեն արտագաղթելու
4. Տուրիզմի զարգացումը – վերջին տարիներին համայնքը ծեռք է բերել բավականին լայն չանաչում <Գաթայի փառատուն> և հայ-ֆրանսիական ֆիլմի նկարահանումների միջոցով: Այդ միջոցառումները կշարունակվեն նաև հաջորդ տարիներին և կունենան նոր զարգացումներ, որով կխթանվի զբոսաշրջությունը:
5. Բնակավայրի բարեկարգումը – կոմունալ հարմարություններ, փողոցների լուսավորություն և բարեկարգում
6. Մշակութային և մասսայական սպորտային միջոցառումների կազմակերպում, մշակութային կյանքի ակտիվացում:

Համայնքի համար սահմանված կայուն զարգացման ցուցանիշները հինգ տարիների համար

հհ	ցուցանիշ	թիվախային արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին	30	30	29	28	25	20
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ (տոկոսներով)	0	2	5	10	15	20
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը(չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ՝ արտահայտված տոկոսներով					1	1

2.8 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

hh	Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
1.	Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը (անհատ ձեռնարկատերեր և ձեռնարկություններ)	1	2	3	3	4	5	7
2.	Ոչ գյուղատնտեսական բնագավառում ֆորմալ զբաղվածության աճ	1	2	5	7	10	15	15
Նախատեսվող ծրագրերը		Միջանկյալ արդյունքներ						
1. Շամպայնի գործարանի հիմնման նպատակով Հողահատկացում		Խաղողագործության խթանում Խաղողի բերքի մթերում Աշխատատեղերի ավելացում Տուրիզմի խթանում						

hh	Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
1.	Գույքի հետ գործարքների համապատասխանությունը «Գույքի կառավարման ծրագրին»							
Նախատեսվող ծրագրերը		Միջանկյալ արդյունքներ						
Համայնքի հողերի վարձակալությամբ տրամադրում պարզեցված կարգով		Հողերի լրացուցիչ մշակությունից արդյունքներ Սեփական եկամուտների ավելացում						

hh	3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
1.	Առանձնացված նախադպրոցական հաստատություն (այն համայնքներում, որտեղ առանձին նախակրթարան չկա)							
2	Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով)	85	88	100	100	100	100	100
3.	Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից	լավ	լավ	լավ	լավ	լավ	լավ	լավ
	Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ						
	Մանկահասակ երեխաների խմբի գործունեություն	Մանկահասակ երեխաների դաստիարակություն և ուսուցում						

hh	4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
1	Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ	5	7	10	12	12	12	12
2	Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ	1	1	1	2	3	5	7
3.	Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով	20	25	25	30	30	40	50
4	Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից	բավ.	բավ	լավ	լավ	լավ	լավ	լավ
5	Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայնքից դուրս մշակութային օջախներ	0	0	15	30	45	60	75
6	Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ	0	0	5	5	10	15	15
7	Համայնքային գրադարանի (ներառյալ							

	էլեկտրոնային գրադարանի) առկայություն							
8	Գրադարնից օգտվողների թվի տարեկան աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0	2	2	2	2	2	2
	Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ						
	1.Մասսայական սպորտաձևերի մրցումների կազմակերպում 2.Թատերական խմբի կազմակերպում, ներկայացումներ 3.Մշակույթի տան վերանորոգում	Երիտասարդներին ներգրավվածություն Մշակութային միջոցառումների կազմակերպում դրսից հրավիրված կոլեկտիվների մասնակցությամբ: Մշակութային փորձի փոխանակություն						

hh	5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
1	Սոցիալական ծրագրի առկայություն	1	1	1	1	1	1	1
2	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը ծրագրից	լավ	լավ	լավ	լավ	լավ	լավ	լավ
	Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ						
	1.<Փարոս> համակարգ 2.Շուկայում անմրցունակ անձանց համար գյուղ աշխատանքների ծրագիր	30 ընտանիքներ ստանում են ընտանեկան նպաստ 10 ընտանիքներ ստանում են սոցիալական նպաստ 20 ընտանիքներ ընդգրկված են ծրագրերում						

hh	6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
1	Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ			1	1	2	3	4
2	Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարավերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով			10	40	50	60	80
3.	Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից	վատ	վատ	բավ	բավ	լավ	լավ	լավ
	Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ						

1. Մասսայական սպորտաձևերի խմբերի ձևավորում, մարզահագուստի ձեռքբերում 2. Թենիսի կորտի ստեղծում	Երիտասարդներին ներգրավվածություն Սպորտային միջոցառումների կազմակերպում դրսից հրավիրված կոլեկտիվների մասնակցությամբ: Նոր մարզաձևի մասսայականացում
--	--

հհ	7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
1	Համայնքում կառուցված բնակելի մակերես	0	0	200	200	200	600	600
2	Համայնքապետարանում հաշվառված բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թվի հարաբերությունը համայնքի տնային տնտեսությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	50	50	50	48	47	44	40
	Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ						
	1. Բնակարանաշինության ծրագրի իրականացում	Նոր առանձնատներ վթարային տների փոխարեն						

հհ	8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
	Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	-	-	-	այո	այո	այո	այո
	Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	100	100	100	100	100	100	100
	Համայնքում քաղաքաշինական	-	-	այո	այո	այո	այո	այո

կանոնադրության առկայություն								
Կառուցապատման թույլատրության մեջ նշված ժամկետների պահպանմամբ իրականացված շինարարությունների թվի հարաբերությունը համայնքում իրականացված շինարարությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	100	100	100	100	100	100	100	100
Համայնքում հավաքված և աղբավայրերում տեղադրված աղբի հարաբերությունը համայնքում առաջացող ամբողջ աղբին, արտահայտված տոկոսով	100	100	100	100	100	100	100	100
Համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքի մակերեսի հարաբերությունը համայնքի ընդհանուր տարածքի մակերեսին, արտահայտված տոկոսով	20	20	50	80	100	100	100	100
Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանությունից և սանիտարական մաքրումից	բավ	բավ	բավ	բավ	լավ	լավ	լավ	լավ
Համայնքի բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարումից և ջրահեռացումից	բավ	բավ	բավ	լավ	լավ	լավ	լավ	լավ
Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման ջրի մատակարարումից	վատ	վատ	բավ	բավ	լավ	լավ	լավ	լավ
Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	0	0	10	10	10			
Գերեզմանատների համապատասխանությունը հատկազօին (այսինքն՝ գերեզմանատան հաստատված տարածքից դուրս գերեզմանատեղի չի հատկացվում)	համ	համ	համ	համ	համ	համ	համ	համ
Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ							
1.Գլխավոր հատակազօի պատվիրում և ձեռքբերում 2.Քաղաքաշինության կանոնադրության ընդունում, գոտիականության նախագծի մշակում 3.Բնակավայրի ներքում Ոռոգման ներքին ցանցի ստեղծում 4.Ոռոգման ջրի ջրամբարի կառուցում 5.Խմելու ջրի ջրազօի նորոգում	Գլխավոր հատակազօի, Գոտիականության նախագիծ: Քաղաքաշինական կանոնադրություն Տնամերձ հողամասերի լիարժեք ոռոգում Ոռոգման ջրով ապահովվածություն և մշակաբույսերի լիարժեք ոռոգում, Նոր պտղատու այգիների հիմնում մինև 50հա տարածքով Հացահատիկի բերքատվության կրկնակի ավելացում: Խմելու ջրի մատակարարման որակ							

hh	9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
	Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի աշխատանքներից	չկա	չկա	բավ	լավ	լավ	լավ	լավ
	Համայնքային ենթակառուցված ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին, արտահայտված տոկոսով	0	0	50	100	100	100	100
	Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին	--	-	-	-	-	-	-
	Համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի պարկում 5 և ավելի տարի հնություն ունեցող մեքենաների հարաբերությունն ավտոպարկի մեքենաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	-	-	-	-	-	-	-
	Համայնքի ենթակառուցված տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակառուցված տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով	10	10	11	12	15	20	25
	Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ						
	1.Խաչիկ Եղեգնաձոր երթուղու ապահովում 2.Կենտրոնակ փողոցի վերանորոգում և գյուղամիջյան փողոցների ասֆալտապատում 3.Ճանապարհային նշանների տեղադրում	Հաստատուն տրանսպորտային կապ մարզկենտրոնի հետ Բարեկարգ կենտրոնական փողոց երթևեկության անվտանգություն						

հհ	10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարում	կա	կա	կա	կա	կա	կա	կա
	Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ						
	1.							

հհ	11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում	թիրախային արժեք						
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
	Համայնքում ապաստարանի կամ թաքստոցի առկայություն							
	Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբի առկայություն	1	1	1	1	1	1	1
	Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքի ՔՊ մարմինների հմտությունների կատարելագործման նպատակով վարժանքներ	1	1	2	2	2	2	2
	Կամավորական փրկարարական միավորումների ստեղծում, ուսուցման կազմակերպում	1	1	2	2	2	2	2
	Նախատեսվող ծրագրերը	Միջանկյալ արդյունքներ						
	1. Համագործակցություն ԱՌՆԱՊ ազգային պլատֆորմի հետ՝ ՍՌՆ վերագնահատման մեջ ընդրկված ծրագրերի իրականացմամբ	Քաղաքացիական պաշտպանվածություն						